

Ա. Ռ. Ա. Կ

Զ. Ր. Պ. Ա. Ր. Տ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

Խիստ շատ անգամ կը պատահի
 Որ գէշ բան մը կը գործեմք,
 Ու յանցանքը առանց ահի
 Ուրիշի վրայ կը ձգեմք
 Ու կըսեմք.
 Իրաւ որ նա թէ չըլինէր,
 Այս իմ մըտքէս ալ չէր անցներ.
 Իսկ երբ մարդիկ չըմընան,
 Յանցաւորն ո՞վ է. — սատանան.
 Թէպէտ եւ նա

Այն բանին մէջ գուցէ յանցանք չունենայ,
 Ասոր ունիմք հազար ու մէկ օրինակ,
 Մեք անոնցմէ մէկը յիշեմք հոս մինակ.

Հընդկատանի կողմերը պրահման մը կար անուանի,
 Բերնին նայիս՝ շատ ջերմեռանդ ճըգնաւոր,
 Բայց վարքն ու բարքը ոչ այնչափ դովանի.
 (Պրահմանաց մէջն ալ չըպակտիր կեղծաւոր.)

Մեզ այն պէտք չէ. բանը ո՞րն էր. —
 Սա իբրը թէ եղբարց կարգին
 Ամենէն շատ մեղաւորն էր,
 Միւսերը սուրբ մարդիկ էին.

Բայց եկու տես որ
 Իրենց մեծաւոր
 Խիստ ու բըռնաւոր
 Պրահման մ' ունէին.
 Ո՞վ կըրնար շարժիլ
 Ընդդէմ կանոնին:
 Պահոց օրերը հասան.
 Ի՞նչպէս ընէր մեր պրահման
 Իպսին ըսպաս
 Իծովին խըթում,
 Եւ անպատուհաս
 Փոքրիկ կերուխում:

Զգիտեմ ուսկից եւ ի՞նչպէս
 Մէկ հաւկիթ մը ձեռք ձըգեց,
 Խուցը մըտաւ այլոց պէս,
 Մինչ կէս գիշեր ըսպասեց.

Կայծքարը զարկաւ, ճըրագը վառեց,
 Վրբան հաւկիթը եփեւ ըսկըսեց:

Աչքը տընկած՝ միշտ հաւկիթին կընայէր,
 Եւ մէկգիշեր հանդարտիկ ման կըբերէր.
 Ատեն ատեն բերնին թուքը կուլ կուտար,
 Շուտ եփեւուն՝ շուտ ուտեւուն կըփութար.

Մէկ կողմանէ ալ կըխընտար
 Իւր վանահօրը մօրութիւն.
 Կըսէր մըտքէն. ալէկ գըտար
 Բըռնըւելիք վարպետորդին.

Ես հիմակ այս ձուն
 Ուտեմ կըշտանամ,
 Յետոյ գընա դուն
 Իմացիր տեսնամ:
 Մէյմ' ալ նայիս' մեծաւորն
 Չեղէ չըգայ կամացուկ,
 Յանկարծ բացաւ խըցին դուն
 Ու ներս խոթեց իւր մօրուք:
 « Ատ ինչ է քու բրածըգ,
 Կանչեց վըրան դռալով:
 Պատասխան տուր, յանցանքըգ
 Կըրնաս ծածկել, ինչ կերպով »:
 Ինչ ըսէր խեղճ ճըգնաւորը,
 Բռնըւեցաւ, ճար չունէր:
 Բաց էր մեղքն ու մեղաւորը,
 Ուր պահուրտէր, ինչ ընէր:
 « Հայր սուրբ գոչեց, — աչքէն ցառեց արցունքը, —
 Մեղայ քեզի, թողութիւն տուր յանցանքիս:
 Չգիտեմ ուսկից եկաւ ինձ այս փորձանքը:
 Յայտնի բան է. չար սատանան խաբեց զիս »:
 Սատանան անդին խըցին անկիւնէն
 Ճըւաց ու ըսաւ, « Հերիք է հերիք:
 « Ամօթ չէ՞ ձեզի որ ամէն առէն
 « Չարութիւն կընէք ու զիս կըքըջրէք:
 « Ես շիտակն ըսեմ, քեզմէ սովրեցայ,
 « Եւ առջի անգամն էր որ հոս տեսայ
 « Հաւկիթ եփելը ճըրագի վերայ »:
 ԲՈՒԼՈՎ.

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

Յ Ա Ն Գ Ա Ր Ա Ն

կ ա մ

ԲԱՌԳԻՐԳ ՅԱՆԳԱՅ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

Խ մ' բ ա գ ր ե ա ց

Խ Ո Ր Է Ն Վ. Գ Ա Լ Ֆ Ա Յ Ե Ա Ն.

Մեր ազգին պէս ոտանաւոր գրուածքներ սիրող ազգի մը համար՝ յիրաւի զարմանալի պակասութիւն մի էր մինչեւ ցայժմ ՅԱՆԳԱՅ ՀԱՅԿԱԶԵԱՆ մի չունենալը, որով տաղաչափք եւ բանաստեղծք մեծ դիւրութիւն գտանէին իրենց տողերը գրելու, եւ իրենց հանճարը յանգփնտուելու աշխատանքով չյօգնէր: — Ահա այսուհետեւ այս կարօտութիւնը լցուեցաւ, եւ տաղաչափք ու լեզուագէտք այս նորատիպ դիւրատար ՅԱՆԳԱՅԸ մէջ կդառնան մեր լեզուին ամէն բառերն ալ՝ յանգերուն կարգաւը շարուած:

Գինն է 1 ըուպլի 50 քօփ. արծ., որ է 30 ղուռուշ: